ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 նոյեմբերի 2023թ. թիվ 671-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ
ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու և ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի N 134-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 46-Ն որոշման հավելված 1-ի 6-րդ կետի 3-րդ ենթակետի և ՀՀ Լոռու մարզպետի 2022 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 872-Ա որոշմամբ հաստատված «ՀՀ Լոռու մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2023 թվականի հիմնական միջոցառումների պլանի» 11.1.1 կետի՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. 2023 թվականի դեկտեմբերի 7-ին Լոռու մարզում իմ ղեկավարությամբ անցկացնել հրամանատարաշտաբային ուսումնավարժություն «Ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպում և իրականացում» թեմայով:

2. Ուսումնավարժությանը ժամանակին նախապատրաստվելու և արդյունավետ անցկացնելու նպատակով հաստատել՝

1) ուսումնավարժության ղեկավար կազմը՝ համաձայն թիվ 1 հավելվածի.

2) ուսումնավարժության ղեկավարման շտաբի կազմը՝ համաձայն թիվ 2 հավելվածի.

3) միջնորդական խմբի կազմը՝ համաձայն թիվ 3 հավելվածի:

3. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ, մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Ս.Գաբրիելյանին՝

1) ապահովել անցկացման փաստաթղթերի ժամանակին մշակումը և մինչև ս/թ նոյեմբերի 25-ը ներկայացնել իմ հաստատմանը.

2) կազմակերպել ուսումնավարժությանը ներգրավվող պաշտոնատար անձանց նախապատրաստումը՝ համաձայն հաստատված օրացուցային պլանի.

3) ապահովել համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների հետ ուսումնավարժության անցկացման հարցերում (ազդարարում, տարահանում և այլն).

4) ճշգրտել «Ուժեղ երկրաշարժի դեպքում ՀՀ Լոռու մարզի բնակչության պաշտպանության կազմակերպման պլանը».

5) ճշգրտել փոխգործողությունների պլանները.

6) ուսումնավարժության նախապատրաստման ընթացքում մարզային լրատվամիջոցներով բնակչությանը տեղեկացնել ուսումնավարժության բնույթի մասին.

7) ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին զեկուցել 2023թ. դեկտեմբերի 1-ին:

4. Ուսումնավարժության ղեկավարի տեղակալ Գ. Ասրյանին՝

1) վերանայել և ճշգրտել մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովի անդամների խնդիրները, գործառույթներն ու իրավունքները.

2) ապահովել գործնական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով:

5. Սույն որոշումը տրամադրել ուսումնավարժության մասնակիցներին:

6. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

08/11/23

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2023թ. նոյեմբերի 8
ք.Վանաձոր

Հավելված 1.
ՀՀ Լոռու մարզպետի
2023թ. նոյեմբերի 8-ի
թիվ 671-Ա որոշման

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ
ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ ԿԱԶՄ

Հ/Հ	***Ազգանուն, Անուն, Հայրանուն***	***Զբաղեցրած պաշտոնը***
1.	Խաչատրյան Արամ Մայիսի	Ուսումնավարժության ղեկավար, ՀՀ Լոռու մարզպետ
2.	Գաբրիելյան Սերոբ Սանասարի	Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ, Լոռու մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ
3.	Ասրյան Գոռ Արմենի	Ուսումնավարժության ղեկավարի տեղակալ, ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ, մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովի նախագահի տեղակալ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

08/11/2023

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ

Հավելված 2.
ՀՀ Լոռու մարզպետի
2023թ. նոյեմբերի 8-ի
թիվ 671-Ա որոշման

ԿԱԶՄ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ
ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՇՏԱԲԻ

Հ/Հ	***Ազգանուն, Անուն, Հայրանուն***	***Զբաղեցրած պաշտոնը***
1.	Դունամալյան Արմեն Սանասարի	Լոռու մարզային փրկարարական վարչության ՃԿԿ պետ, փ/ծ փոխգնդապետ - ՀՇՈՒ-ի խաղարկման և վերլուծման խմբի ղեկավար
2.	Պողոսյան Արտակ Սամվելի	Լոռու մարզային փրկարարական վարչության ՃԿԿ ավագ հրահանգիչ, փ/ծ կապիտան - ՀՇՈՒ-ի խաղարկման և վերլուծման խմբի անդամ
3.	Եղիազարյան Վաչագան Բաղդասարի	Լոռու մարզային փրկարարական վարչության ՃԿԿ ավագ հրահանգիչ, փ/ծ մայոր - ՀՇՈՒ-ի խաղարկման և վերլուծման խմբի անդամ
4.	Սահակյան Հովիկ Վոլոդյայի	Լոռու մարզային փրկարարական վարչության Վանաձոր-2 ՀՓՋ-ի հրամանատար, փ/ծ փոխգնդապետ - ՀՇՈՒ-ի գործնական միջոցառումների կազմակերպման խմբի ղեկավար
5.	Սերոբյան Նարեկ Սրապիոնի	Լոռու մարզային փրկարարական վարչության Վանաձորի թիվ 1 ՀՓՋ-ի հրամանատարի տեղակալ, փ/ծ փոխգնդապետ - ՀՇՈՒ-ի գործնական միջոցառումների կազմակերպման խմբի անդամ
6.	Դաղբաշյան Վոլոդյա Գագիկի	Լոռու մարզային փրկարարական վարչության Վանաձորի թիվ 2 ՀՓՋ-ի հրամանատարի տեղակալ, փ/ծ մայոր - ՀՇՈՒ-ի գործնական միջոցառումների կազմակերպման խմբի անդամ
7.	Փենինյան Հարություն Գառնիկի	Լոռու մարզային փրկարարական վարչության Գուգարքի ՀՓՋ-ի հրամանատարի տեղակալ, փ/ծ ավագ լեյտենանտ - ՀՇՈՒ-ի գործնական միջոցառումների կազմակերպման խմբի անդամ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

08/11/2023

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ

Հավելված 3.
ՀՀ Լոռու մարզպետի
2023թ. նոյեմբերի 8-ի
թիվ 671-Ա որոշման

ԿԱԶՄ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ
ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՄԻՋՆՈՐԴԱԿԱՆ ԽՄԲԻ

Հ/Հ	***Ուսումնավարժությանն ընդգրկված մասնակիցները***	***Միջնորդներ***	
		պաշտոնը	***ազգանուն, անուն***
1.	Վանաձոր համայնք, ՀՀ ՆԳՆ ոստիկանության Լոռու մարզային վարչություն, մարզի զանգվածային լրատվամիջոցներ, Վանաձորի տարածքային զինկոմիսարիատի և ՀՀ ՊՆ թիվ 3 ԲԿ-ի ներկայացուցիչներ	ՄՓՎ ԲՊ բաժնի պետ	Գրիգորյան Արմեն
2.	Տարահանման հանձնաժողով, մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշի-նության և ենթակառուցվածքների կառավարման վարչություն, Սպիտակ համայնքի Սպիտակ և Շիրակամուտ բնակավայրեր	ՄՓՎ ԲՊ բաժնի ավագ հրահանգիչ	Վարդանյան Պավլիկ
3.	«Լոռու մարզային փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ, մարզպետի աշխատակազմի առողջա-պահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչություն, մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչություն	ՄՓՎ ԲՊԲ-ի ավագ հրահանգիչ	Սողոմոնյան Վահագն
4.	Մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսու-թյան և շրջակա միջավայրի պահպանության վարչություն, «ՍՊԱԾ» ՊՈԱԿ-ի «Վանաձոր» համալիր կայան, «ՀՀ ՇՄ հիդրոօդերևութաբանու-թյան և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի «ՀՀ Լոռու մարզային ծառայություն»	ՄՓՎ ԲՊ բաժնի գլխավոր մասնագետ	Խաչատրյան Սեյրան
5.	«Վեոլիա Ջուր» ՓԲԸ, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ, «ՀԷՑ» ՓԲԸ «Դեբեդ» մասնաճյուղ, Ալավեր-դի, Ստեփանավան և Տաշիր համայնքներ	ՄՓՎ ՃԿԿ ավագ հրահանգիչ	Ավետիսյան Կարեն

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

08/11/2023

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ